«Հայ Ստոմատոլոգների Միություն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2015թ-ին: Նույն թվականի մայիս ամսին կայացած հիմնադիր ժողովում հռչակվեցին այն հիմնական սկզբունքները, որոնցով պատրաստվում էր առաջնորդվել մեր միությունը:

- ✓ Ստեղծել քննարկումների բաց և թափանցիկ հարթակ, որը կմիավորի ստոմատոլոգիական հանրությանը
- ✓ Հանդիսանալ կապող օղակ ստոմատոլոգիական հանրության ոլորտում գործող ՀԿ -ների և պատկան մարմինների միջև
- ✓ Կապ հաստատել այլ երկրներում գործող մասնագիտական և միջազգային կազմակերպությունների հետ
- ✓ Աջակցել ստոմատոլոգիական ոլորտի շարունակական զարգացմանը՝ կազմակերպելով գիտապրակտիկ կոնֆերանսներ, սեմինարներ և համաժողովներ
- ✓ Նպաստել և աջակցել մասնագետների սոցիալական խնդիրների լուծման և իրավական պաշտպանվածության բարելավման հարցում:

Անցել է երեք տարի և անգամ այդ փոքր ժամանակահատվածը մեզ հնարավորություն է տալիս վերլուծել ՀՍՄ-ի կատարած աշխատանքը և գնահատել ստոմատոլոգիական միջավայրում նրա դերակատարումը: Ցանկանում եմ անդրադառնալ նաև մեր կազմակերպության ստեղծման դրթապատճառներին և անհրաժեշտությանը:

Ի՞նչ անհրաժեշտություն կար ունենալ ևս մեկ հասարակական կազմակերպություն, եթե դաշտում այդ պահին արդեն գործում էին մասնագիտական 13 հասարակական կազմակերպություններ:
Իրականում այդ 13-ի մեջ գերակշռում էին նեղ մասնագիտական կազմակերպությունները, որոնց հիմնական նպատակն էր որեւէ նեղ ուղղության զարգացումը: Պետք է ասենք, որ դրանցից շատերը գործում են բավականին ակտիվ և լիարժեք կատարում են իրենց առջև դրված առաքելությունը:
Իհարկե, դաշտում առկա են ՀԿ-ներ, որոնք տարիներ շարունակ որևէ ակտիվություն չեն ցուցաբերում, սակայն դրա պատճառների վերլուծությունը այս հոդվածի նպատակը չի հանդիսանում:
Ստոմատոլոգիայի ասպարեզում հարցերի ավելի լայն շրջանակների ընդգրկումով գործող ընդամենը մեկ կազմակերպություն կար՝ «Հայաստանի ստոմատոլոգների ասոցիացիան», որը ուներ շուրջ 20 տարվա պատմություն և բավականաչափ ներուժ: Լինելով այդ ասոցիացիայի վարչության երկարամյա անդամներ, մենք բազմիցս փորձել ենք բարձրացնել Հայաստանում ստոմատոլոգիայի զարգացման կարևորագույն հարցերը, կանոնակարգել և բարելավել աշխատանքը և հստակեցնել ծրագրերը: Սակայն պարզ դարձավ, որ առկա են խիստ տարաձայնություններ: Ասոցիացիայի ղեկավարության և մեր տեսլականը Հայաստանում ստոմատոլոգիայի ապագայի վերաբերյալ հիմնական հարցերում խիստ տարբեր էին: Տարիներ առաջ ստեղծված ճգնաժամային իրավիճակում «Հայաստանի ստոմատոլոգների ասոցիացիան» չկատարեց իր առաքելությունը և չկանգնեց բժիշկ-ստոմատոլոգի կողքին: Այդ և բազմաթիվ այլ պատճառներով առաջացավ անհրաժեշտություն ստեղծել նոր հասարակական կազմակերպություն՝ Հայ Ստոմատոլոգների Միություն, որը կհամախմբեր ստոմատոլոգների այն հատվածը, որոնք

համախոհ կլինեին մեր գաղափարներին: Ի վերջո, ինչպես ենք մենք պատկերացնում ստոմատոլոգիայի ապագան Հայաստանում:

- Հայաստանում ստոմատոլոգիան պետք է համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին: Մասնագիտական կրթությունը պետք է լինի լիարժեք: ԲՈՒՀ- ը պետք է պատրաստի այնպիսի մասնագետներ, որոնք հիմնովին տիրապետեն բժիշկ ստամոտոլոգի բոլոր գործառույթները և իրավունք ստանան այն կիրառել գործնականում ու այն էլ՝ ամբողջ ծավալով: Այսինքն բժիշկ -ստոմատոլոգը ավարտելով ԲՈՒՀ-ը (ներառյալ ինտերնատուրան) պետք է ընդհանուր ստոմատոլոգի որակավորում ստանա և իրավունք ունենա իր բազմաֆունկցիոնալ աթոռի վրա, կատարել թերապևտիկ, օրթոպեդիկ և վիրաբուժական գործունեություն, ինչպես դա արվում է բոլոր զարգացած երկրներում: Եթե տվյալ մասնագետը ցանկություն ունենա առավել խորը մասնագիտանալ ստոմատոլոգիայի ասպարեզում, միայն այս պարագայում կարող է անցնել օրդինատուրա տվյալ նեղ մասնագիտությամբ և դառնալ տվյալ ոլորտի մասնագետ-փորձագետ: Այդ մեխանիզմով կներդրվի նաև փորձագետների ինստիտուտը, որի ստեղծումը խիստ անհրաժեշտ ենք համարում Հայաստանի համար: Այսինքն բազային բժիշկ-ստոմատոլոգի դիպլոմը, այլ ոչ թե օրդինատուրայի վկայականը պիտի լինի աշխատանքի թույլտվության միակ իրավունքը՝ իսկ օրդինատուրան վկայելու է մասնագետի խորացված գիտելիքների և նեղ մասնագիտական հմտությունների մասին:
- Պետք վերականգնել բժիշկների լիցենզավորումը և այն համապապատսխանեցնել միջազգային չափանիշներին: Մենք գտնում ենք, որ միայն այս ճանապարհով կկանխվի մեծ քանակությամբ անորակ և կիսագրագետ մասնագետների ներհոսքը դեպի ստոմատոլոգիայի բնագավառ: Խիստ վերահսկելով այդ գործընթացը ակնհայտ կդառնա թե որ ԲՈՒՀ-ը ավարտած շրջանավարտը կկարողանա հեշտությամբ հանձնել տվյալ քննությունը և ըստ դրա հնարավոր կլինի ձևավորել ԲՈՒՀ-երի ռեյտինգը:
- Պետք է հիմնովին վերանայել ստոմատոլոգիական կլինիկաների լիցենզավորման մեխանիզմը, վերացնել ակնհայտ անհեթեթությունները, ստեղծել հավասար պայմաններ զարգացման համար: Միայն այդ պայմաններում բոլոր կլինիկաները կաշխատեն օրինական դաշտում և չի ստեղծվի խոչընդոտներ ապահովագրական գործընթացներ իրականացնելու ժամանակ: Նաև այդ պարագայում հնարավոր կլինի իրավական դաշտում պաշտպանել բժիշկ-ստոմատոլոգի մասնագիտական շահերը: Պետական բյուջեից տրամադրվող միջոցները պետպատվերի ձևաչափով պետք է օգտագործել առավել արդյունավետ: Անհրաժեշտ է փոխել պետապատվերի տրամադրման սկզբունքը, պետության միջոցները պետք է տնօրինի հիվանդն ինքը՝ որոշելով, թե որ հաստատություն դիմի իր բուժման խնդիրները հոգալու համար: Այդ դեպքում միայն պարզ կդառնա, թե որ կլինիկան և որ բժիշկն են գործում առավել որակով և արդյունավետ:
- Այսօր շատ է խոսվում մեր ոլորտի ՀԿ-ների միավորման անհրաժեշտության մասին: Միավորման գաղափարը հանդիսանում է մեր ՀԿ-ի գործունեության հիմնական դրույթներից մեկը: Սակայն մենք կարծում ենք, որ միավորումը կարող է տեղի ունենալ միայն ընդհանուր գաղափարական հենքի վրա և այլ ոչ թե կրի մեխանիկական բնույթ: Մենք հուսով ենք, որ ինչ որ ժամանակ հետո բոլոր հիմնահարցերի շուրջ կձևավորվի մեկ ընդհանուր գաղափարախոսություն և միավորումը կդառնա նպատակային և իմաստալից:
- Ոլորտի կարևոր և արդիական առաջնահերթություններից մեկն էլ դենտալ տուրիզմի զարգացումն է, որը հնարավոր է միայն օրենսդրական լուրջ փոփոխությունների, միջազգային չափորոշիչների ներդրման և սպասարկման որակի համատարած բարձրացման շնորհիվ: Դրսից եկած պացիենտը պետք է լիարժեք երաշխիքներ ունենա բուժման որակի վերաբերյալ: Այդ գործառույթը կարող է իր վրա վերցնել վստահություն վայելող որևիցէ հասարակական կազմակերպություն:

Անդրադառնանք մեր կատարած աշխատանքներին: Երեք տարիների ընթացքում ՀՍՄ-ն լուրջ ներդրում ունեցավ բժիշկների մասնագիտական մակարդակի բարձրացման, նոր տեխնոլոգիա-

ների ներմուծման ու կիրառման գործում: Կազմակերպեցինք բազմաթիվ գիտապրակտիկ կոնֆերանսներ և սեմինարներ: Հրավիրվեցին դասախոսներ արտերկրից: Հուրախություն մեզ՝ մենք ստեղծեցինք նաև հարթակ հայ դասախոսների համար, որոնց գիտելիքները և փորձը նույպես գնահատելի են և պահանջված: Մեր ուշադրության կենտրոնում են մարզերում աշխատող կոլեգաները: 2017 թվականի ընթացքում կայացան աննախադեպ կոնֆերանսներ՝ Սյունիքում և Շիրակում:
Ուզում եմ նաև կարևորել մեր դերը տեղեկատվական դաշտում: Հաջողությամբ շարունակում ենք հրատարակել մեր ամսագիրը:
Ստեղծվել և ակտիվ գործում է մեր կայքէջը՝ www.adu.am, որը կարևոր և օգտակար տեղեկատվական աղբյուր է ՀՍՄ անդամ և նաև ընդանրապես բոլոր ստոմատոլոգների համար: Կայքէջում ներկայացված է մեր առօրյան, մանրամասն տեղեկատվություն մեր գործունեության և միջոցառումների մասին:
ՀՍՄ-ն եղել է ակտիվ նաև պետական պատկան մարմինների հետ աշխատանքում: Կայացել են հանդիպումներ ԱՆ ներկա և նախկին նախարարների, ոլորտի այլ կազմակերպիչների հետ: Միությունը ներկայացված է եղել տարբեր գերատեսչական հանձնաժողովներում, մեր ներկայացուցիչները հրավիրվել և մասնակցել են բազմաթիվ մասնագիտությանը վերաբերող քննարկումներին: Արդյունքում հաշվի է առնվել մեր կարծիքը բժշկի մասնագիտությունների ցանկի կազմելու և հաստատման հարցում, պետական պատվերի գների վերանայման և արդյունավետության բարձրացման ներկա գործնթացում:

Մեզ համար առաջնահերթ է բժիշկ-ստոմատոլոգի շահերի պաշտպանությունը: Հանդիպել և ներկայացրել ենք մեր կարծիքը բնապահպանության ոլորտի ղեկավարներին՝ թափոնահան-ման հարցերի կարգավորման շուրջ: Արդյունավետ են եղել քննարկումները ՀՀ ԱՆ «Հիվանդութ-յունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ պատասխանատուների հետ: Ներկայացվել է մեր տեսակետը նորմատիվային բազայի և ստոմատոլոգների պարտադիր պարբերական զննումների գործընթացի վերաբերյալ:
Պետք է ազնվորեն ասենք, որ այդքան դյուրին չէ կյանքի կոչել Հայ Ստոմատոլոգների Միության որդեգրած ծրագրային խնդիրները և նպատակները: Միշտ չէ որ հաջողվում է իրագործել ցանկացածը, քանի որ երբեմն հանդիպում ենք անտարբերության, պրոֆեսիոնալիզմի բացակայության, խիստ հակադրությունների՝ ընդհուպ հանդիպելով տարբեր խմբերի շահերի բախման: Բայց մենք լավատես ենք և գտնում ենք, որ նպատակասլած և հետևողական աշխատանքի արդյունքում կհասնենք մեր նպատակներին:
Ավարտելով դիմում եմ մեր միության շուրջ 500 անդամներին, ՀՀ և արտերկրում գործող բոլոր հայ ստոմատոլոգներին:
Ակտիվորեն մասնակցեք մասնագիտությանը առնչվող հասարակական կյանքին՝ աջակցելով միության ծրագրերին և միջոցառումներին: Մենք շատ ուրախ կլինենք տեսնել մեր շարքերում նոր դեմքեր՝ կայացած և փորձառու կոլեգաներ, երիտասարդական ավյունով լցվաց նորաթուխ մասնագետներ, ոլորտի կազմակերպիչներ՝ միավորված մեր գաղափարների շուրջ:

Այս տարի մայիսին կկայանա հաշվետու-ընտրական կոնֆերանսը: Կնտրվի նոր ղեկավար կազմ, քանի որ Կանոնադրության համաձայն նախագահը, տեղակալները և վարչության անդամները ընտրվում են երկու տարով:
Վստահ եղեք՝ ՀՍՄ-ի հզորացումը և ծրագրերի իրագործումը անպայման դրականորեն կազդի ձեր մասնագիտական և գործնական կյանքի վրա:

Հայ Ստոմատոլոգների Միության
Հիմնադիր Նախագահ Թորգոմ Դաշտոյան